**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 1**

2021թ. օգոստոսի 27-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի հաստատում
2. 2021-2022 ուստարվա նախապատրաստական աշխատանքների հարցը
3. 2021-2022 ուստարվա առկա ուսուցման ընդունելության արդյունքները
4. 2021-2022 ուստարվա մանկավարժական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստում
5. ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 24 անդամից 19-ը

**1. Լսեցին -** 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի հաստատման հարցը

**Արտահայտվեցին** – ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը ներկայացրեց կիսամյակի աշխատանքային պլանը

**Որոշեցին** – հաստատել 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանը։

**2. Լսեցին -** 2021-2022 ուստարվա նախապատրաստական աշխատանքների հարցը

**Արտահայտվեցին** – ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը հաղորդեց, որ բոլոր անհրաժեշտ դասացուցակները կազմված են, լուծարքների ժամանակացույցը կազմված է։

**Որոշեցին** – աշխատանքները համարել բավարար։

**3. Լսեցին** – 2021-2022 ուստարվա առկա ուսուցման ընդունելության արդյունքները։

**Արտահայտվեցին –** ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը, ներկայացրեց ընդունելության արդյունքները՝ օգոստոսի 27-ի դրությամբ ուսանողների թիվը կազմում է.

առկա բակալավրիատ՝ 136 ուսանող

մագիստրատուրա՝ 28 ուսանող

**Որոշեցին –** ընդունելության արդյունքները համարել բավարար։

**4. Լսեցին –**2021-2022 ուստարվա մանկավարժական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստում

**Արտահայտվեցին –** ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ Մ.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը ներկայացրեցին ներկայիս իրավիճակում ծառացած խնդիրները և ըստ պրակտիկայի վարչության հրահանգի՝ պրակտիկան կմեկնարկի առցանց, ուշացումով։

**Որոշեցին –** կատարված աշխատանքները համարել բավարար։

**ընթացիկ հարցեր**

**5. ԼՍԵՑԻՆ** – երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Արմինե Հակոբյանի «Հայ գուսանական երգարվեստի երաժշտական լեզվի որոշ առանձնահատկություններ» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ, մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ Սարգիս Էլբակյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Յուրի Յուզբաշյանը, նշեցին, որ աշխատանքը նորույթ է երաժշտության բնագավառում։ Այն անհրաժեշտ է հատկապես ազգային երաժշտության ուսումնասիրման դասաժամերի ընթացքում։ Ձեռնարկն ունի նաև ճանաչողական նշանակություն։ Ա.Բաղդասարյանը նշեց, որ Արմինե Հակոբյանը ներկայացրել է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը՝ երկու դրական կարծիք, ամբիոնի նիստի քաղվածք (23.07.2021 նիստ հ.9 արձանագրությունից)

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Երաշխավորել հրատարակության երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Արմինե Հակոբյանի «Հայ գուսանական երգարվեստի երաժշտական լեզվի որոշ առանձնահատկություններ» ուսումնամեթոդական ձեռնարկը։

Կողմ-19

Դեմ- 0

Ձեռնպահ - 0

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 2

2021թ. սեպտեմբերի 10-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը (բանավոր հարցման ձևով)

**ԼՍԵՑԻՆ** – Մշակութաբանություն մասնագիտության հեռակա ուսուցման 3-րդ կուրսի ուսանող Վրեժ Հովսեփյանի ուսումնական պրակտիկայի մասնակցության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց, որ մշակութաբանություն մասնագիտության հեռակա ուսուցման 3-րդ կուրսի ուսանող Վրեժ Քաջիկի Հովսեփյանը 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակում չի մասնակցել ուսումնական պրակտիկային, որը անցկացվել է հեռավար: Լ.Այվազյանը առաջարկեց հիմք ընդունելով ուսանողի դիմումը թույլատվություն խնդրել ուսանողի պրակտիկան կազմակերպելու համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Դիմել Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտորի ժ/պ պարոն Ա.Խոեցյանին խնդրանքով, թույլատրել ուսանողի ուսումնական պրակտիկան կազմակերպել ս/թ սեպտեմբերի 20-ից՝ 4 շաբաթ տևողությամբ հեռավար (օնլայն) տարբերակով և ղեկավար նշանակել Ա.Առաքելյանին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 3

2021թ. սեպտեմբերի 24-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ (բանավոր հարցման ձևով)

**ԼՍԵՑԻՆ** – հոգաբարձուների խորհրդի անդամության Լեմս Սուրենի Ներսիսյանի թեկնածությունը ներկայացնելու հարցը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին քննարկելու կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Լեմս Սուրենի Ներսիսյանի թեկնածությունը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 4

2021թ. սեպտեմբերի 25-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակի հեռակա ուսուցման ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում
2. 2021-2022 ուս. տարվա մագիստրատուրայի 1-ին կուրսի ատենախոսությունների թեմաների հաստատում
3. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 25 անդամից 18-ը

1. **Լսեցին** - 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակի հեռակա ուսուցման ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփման հարցը

**Արտահայտվեցին** – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց, որ հեռակա ուսուցման ընթացիկ քննությունները ավարտվել են 1-3 կուրսերում, որոնց մասնակցել են 93 ուսանող՝ դրական ստացել են 71 ուսանող, պայմանական փոխադրվել են 18 ուսանող, հեռացվել են 4 ուսանող, 4-րդ կուրսի քննությունները ընթանում են:

**Որոշեցին** – աշխատանքները համարել բավարար:

**2. Լսեցին -** 2020-2021 ուստարվա մագիստրատուրայի 1-ին կուրսի ատենախոսությունների թեմաների հաստատման հարցը

**Արտահայտվեցին** – Ֆակուլտետի ամբիոնների վարիչները ներկայացրեցին 1-ին կուրսերի մագիստրատուրայի ատենախոսությունների թեմաները՝

**Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն**

**Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում մասնագիտություն**

1. Դիմանկարչությունը հայկական մանրանկարներում. XIII-XIV դդ.:
2. Հայ կերպարվեստը համաշխարհային աճուրդի տներում:
3. Խճանկարի արվեստը խորհրդային Հայաստանում:
4. Սևանա լիճը հայկական կերպարվեստում:
5. Հայազգի քանդակագործ կանայք. Նվարդ Զարյան, Այծեմնիկ Ուրարտու, Թերեզա Միրզոյան:

**Մշակութաբանություն**

1. Գեղունի հանդեսի 1901-1906թթ. գործունեությունը:
2. Թորոս Թորամանյանի գիտական-վերակազմական հետազոտությունները. Զվարթնոց, Գագկաշեն:
3. Հայկական և արևելյան զարդանախշերի խորհրդաբանությունը:
4. Հայկական վիմագիր գրչության արվեստը XIII-XIV դդ.:
5. Եգիպտահայ արվեստագետ Օննիկ Ավետիսյանի մշակութային ժառանգությունը:

**Երաժշտության մանկավարժության ամբիոն**

1. Միաձայն և երկձայն երգեցողության զարգացման մեթոդիկան կրտսեր դպրոցում:
2. Սովորողների երգչային ձայնի զարգացումը երաժշտության դասին և դպրոցական երգչախմբի պարապմունքներին:
3. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը և առանձնահատկությունները 5-7-րդ դասարաններում:
4. Ժողովրդական երգը որպես ազգային ինքնության զարգացման միջոց:
5. Ներսես Շնորհալու երաժշտամանկավարժական հայացքները:
6. Երգեցողությունը որպես ռիթմական զգացողության և շարժումային կարողության զարգացման միջոց:
7. Լադային սոլմիզացիան որպես կրտսեր դպրոցականների լսողության զարգացման միջոց:
8. Երաժշտության ընկալման ձևավորման և զարգացման ուղիները կրտսեր դպրոցում:
9. Երաժշտական դաստիարակության ժամանակակից պահանջները Հայաստանի հանրակրթական դպրոցներում:
10. Երաժշտամանկավարժական ժամանակակից միտքը և հայ երեխաների երաժշտական դաստիարակությունը:
11. Կարլ Ադոլֆ Մարտինսեն՝ տեսաբան, մեթոդիստ և խմբագիր:
12. Էդվարդ Բաղդասարյանի «6 պրելուդներ»-ի կատարողական վերլուծությունը:
13. Հենրիխ Նեյհաուզի դաշնամուրային դպրոցի առանձնահատկությունները:
14. Արեգ Լուսինյանի «Կրկես» դաշնամուրային պիեսների ժողովածուն:
15. Կառլ Չերնիի դաշնամուրային վարժությունները որպես սովորողի տեխնիկայի զարգացման միջոց:
16. Դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը երաժշտության միջոցով:
17. Առնո Բաբաջանյանի դաշնամուրային մանրանվագները ուսումնական գործընթացում /դպրոցում/:
18. Մանկական օպերայի ժանրային առանձնահատկությունները:
19. Երաժշտական ընդունակությունները և նրանց զարգացման մեթոդները:
20. Կրտսեր տարիքի դպրոցականների երաժշտական ճաշակի զարգացումը:
21. Սովորողների ծանոթացումը ռապսոդիա ժանրին:
22. Ինքնագործ երգչախմբի դերը երաժշտական դաստիարակության գործում:
23. Մանկական երգչախմբի դերը երաժշտական դաստիարակության գործում:
24. Գեղունի Չթչյանի խմբերգերը «Երաժշտություն» առարկայի դասընթացում:
25. Երվանդ Երկանյանի մանկական ալբոմը «Երաժշտություն» առարկայի դասընթացում:
26. Երվանդ Երկանյանի խմբերգային ստեղծագործությունները «Երաժշտություն» առարկայի դասընթացում:
27. Էդգար Հովհաննիսյանի խմբերգերը «Երաժշտություն» առարկայի դասընթացում:

28. Ալեքսանդր Հարությունյանի վոկալ-խմբերգային ստեղծագործությունները:
29. Էդգար Հովհաննիսյանի վոկալ-խմբերգային ստեղծագործությունները:

**Կերպարվեստի ամբիոն**

1. Էկրանային միջոցների օգտագործման նպատակահարմարությունը կերպարվեստի պարապունքներին:
2. Թեմատիկ նկարչության պարապմունքները որպես սովորողների ստեղծագործական երևակայության ակտիվացման միջոց:
3. Շարժանկարային (անիմացիա) հմտությունների ձևավորման գեղարվեստական տեխնոլոգիաների ծրագրերի առանձնահատկությունները:
4. Սովորողների ծավալատարածական ունակությունների զարգացման տեսագործնական նախադրյալները դիզայն դասընթացում:
5. Պուրակային քանդակը որպես երեխայի գեղագիտական զարգացման միջոց:
6. Դիմանկարի կառուցման առանձնահատկությունները միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:
8. Համակարգչային գրաֆիկայի ուսուցման մեթոդիկան հանրակրթական հաստատությունների կրթական գործընթացում:
9. Սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումը համակարգչային գրաֆիկայի ուսուցման գործընթացում:
10. Համակարգչային գրաֆիկայի տարրերի ուսուցման հիմնախնդիրը հանրակրթական դպրոցում:
11. Համակարգչային գրաֆիկա առարկայի ձևաչափի կառուցումը ՄՄՀ-ում:
12. Ֆրանսիական դաջազարդ գործվածքների ուսումնասիրությունը հայ արվեստը/16-18րդ դդ/
13. Հայկական ոստայնանկությունը ներկման արհեստը
14. Հայ և համաշխարհային /արևելք, արևմուտք/ զարդարվեստի առանձնահատկությունները
15. Ազգային զարդանախշային մոտիվների և հորինվածքի կառուցման սկզբունքները գեղարվեստական գործվածքների արվեստում
16. Հայ առաքելական եկեղեցու խորհրդանշանները, գործվածքի օրինակով
17. Տեքստիլ նմուշնորի /տեքստիլ/ նմուշների գեղարվեստական ձևավորման ժամանակակից միջոցները
18. Արցախի ժանյակագործության սոցիալ-մշակութային առանձնահատկությունները
19. Փայտի գեղարվեստական մշակումը հայկական եկեղեցաշինության բնագավառում

**Որոշեցին** – Հաստատել 2021-2022 ուստարվա մագիստրատուրայի 1-ին կուրսի ատենախոսությունների թեմաները:

**Ընթացիկ հարցեր**

**3. ԼՍԵՑԻՆ** – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Արաքսյա Արտավազդի Խաչատրյանին դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ, պրոֆեսորի պ/կ Ս.Էլբակյանը, կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Լ.Ներսիսյանը, կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Ա.Եղիազարյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ Արաքսյա Խաչատրյանը ունի երկար տարիների աշխատանքային փորձ, հեղինակություն է վայելում ուսանողների և դասախոսների շրջանում, դրսևորում է բարձր մասնագիտական կարողություններ, բարեխիղճ և պատասխանատու է մանկավարժական գործունեության մեջ: Ունի համապատասխան քանակի հոդվածներ, ուսումնամեթոդական ձեռնարկ, մշակութային ասպարեզում համապատասխան գործունեություն:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Արաքսյա Արտավազդի Խաչատրյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Նիստին ներկա էին խորհրդի 25 անդամներից 18-ը:

Բաց քվեարկության արդյունքում

Կողմ-18

Դեմ- 0

Ձեռնպահ - 0

4. **Լսեցին**- Կերպարվեստի ամբիոնի դասախոս Նաիրա Մխիթարյանի «Գործվածքի դիզայն առարկայի դասավանդումը մասնագիտական ուսումնական հաստատություններում» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը

**Արտահայտվեցին**- Կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Ա.Եղիազարյանը, պրոֆեսոր Լ.Ներսիսյանը նշեցին, որ ներկայացված ուսումնամեթոդական ձեռնարկը արդիական աշխատություն է, որն ունի կարևոր նշանակություն դասավանդվող առարկայի շրջանակներում: Դեկանի տեղակալ Ա.Բաղդասարյանը նշեց՝ Նաիրա Մխիթարյանը ներկայացրել է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը՝ երկու դրական կարծիք, ամբիոնի նիստի քաղվածք (10.05.2021 նիստ հ.6 արձանագրությունից)

**Որոշեցին-** Երաշխավորել հրատարակության կերպարվեստի ամբիոնի դասախոս Նաիրա Մխիթարյանի «Գործվածքի դիզայն առարկայի դասավանդումը մասնագիտական ուսումնական հաստատություններում» ուսումնամեթոդական ձեռնարկը:

Կողմ-18
Դեմ- 0
Չեռնպահ - 0

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 5

2021թ. նոյեմբերի 10-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի
խորհրդի նիստը (բանավոր հարցման ձևով)
ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի 4-րդ կուրսի պրակտիկաների պաշտպանության մասին հարցը

**Լսեցին -** 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի 4-րդ կուրսի պրակտիկաների պաշտպանության մասին հարցը

**Արտահայտվեցին** – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց, որ հաշվի առնելով հունվար ամսվա ծանրաբեռնվածությունը (քննություններ, հեռակա ուսուցման դասընթացներ) և լսարանային խնդիրները՝ 4-րդ կուրսի 1-ին կիսամյակի մանկավարժական և ուսումնական պրակտիկաների պաշտպանությունը կազմակերպել ս/թ դեկտեմբերին:

**Որոշեցին** – Պաշտպանությունները անցկացնել դեկտեմբերին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 6

2021թ. նոյեմբերի 22-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի
խորհրդի նիստը (բանավոր հարցման ձևով)
ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ դեկտեմբերի 18-ին կայանալիք ռեկտորի ընտրության հարցը

**Լսեցին –** Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ դեկտեմբերի 18-ին կայանալիք ռեկտորի ընտրության հարցը

**Արտահայտվեցին** – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արա Հակոբյանը ներկայացրեց, որ սույն թվականի դեկտեմբերի 18-ին կայանալու է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի ընտրությունները: Ֆակուլտետի խորհուրդը կարող է թեկնածություն առաջադրել ռեկտորի թափուր պաշտոնի համար:

**Որոշեցին** –Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Վոլոդյայի Խոեցյանի թեկնածությունը առաջադրել ռեկտորի թափուր պաշտոնի համար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 7**

2021թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2021-2022 ուստարվա ավարտական աշխատանքների և թեզերի ընթացքը
2. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը
3. 2020-2021 ուստարվա հեռակա բակալավրիատի քննաշրջանի պարտքերի մարման ամփոփում
4. 2021-2022 ուստարվա առկա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները
5. Հեռակա ուսուցման 2021-2022 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստում
6. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 25 անդամից 18-ը

**1.Լսեցին –** 2021-2022 ուստարվա ավարտական աշխատանքների և թեզերի ընթացքի մասին

**Արտահայտվեցին –** ֆակուլտետի ամբիոնների վարիչներ՝ կերպարվեստի ամբիոնի վարիչ Կ.Աղամյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ Ա.Հարությունյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը ներկայացրեցին ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը: Նրանք նշեցին, որ աշխատանքները ընթանում են համապատասխան աշխատանքային գրաֆիկի:

**Որոշեցին –** կատարված աշխատանքները համարել բավարար:

2. **Լսեցին** – Ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը

**Արտահայտվեցին** – Կերպարվեստի ամբիոնի վարիչ Կ.Աղամյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ Ա.Հարությունյանը նշեցին, որ ամբիոնների վերջին նիստերում կատարվել են համապատասխան ատեստավորումներ.

կերպարվեստի ամբիոն՝ Միհրդատ Մոմենին աշխատում է ատենախոսության 3-րդ գլխի վրա, Տարոն Ալեքսանյանը և Վահագն Ղազարյանը աշխատում են ատենախոսության 2-րդ գլխի վրա, Գագիկ Ավետիսյանը ավարտել է 1-ին գլուխը, Լիլիթ Ամիրջանյանը և Շուշան Քոչարյանը կատարում են գիտատեսական հիմնավորման նյութերի հավաքագրում:

Երաժշտության մանկավարժության ամբիոն՝ Գայանե Հարությունյանը աշխատում է ատենախոսության խմբագրման շուրջ, տպագրել է 2 հոդված, հայցորդ Սերգեյ Խաչատրյանը չի ներկայացել ամբիոն և կապ չի պաշպանում ղեկավարի հետ:

**Որոշեցին** – Ատեստավորել կերպարվեստի ամբիոնի հայցորդներ Միհրդատ Մոմենիին, Գագիկ Ավետիսյանին, Տարոն Ալեքսանյանին, Վահագն Ղազարյանին, Լիլիթ Ամիրջանյանին, Շուշան Քոչարյանին: Ատեստավորել՝ երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդներ Գայանե Հարությունյանին, չատեստավորել երաժշտության ամբիոնի հայցորդ Սերգեյ Խաչատրյանին:

3. **Լսեցին –** 2020-2021 ուստարվա հեռակա բակալավրիատի քննաշրջանի պարտքերի մարման ամփոփման հարցը

**Արտահայտվեցին –** ուսումնական գծով դեկանի տեղակալ Լիանա Այվազյանը ներկայացրեց իրավիճակը՝ հեռակա ուսուցման 145 ուսանողից 119 փոխադրվել են հաջորդ կուրս՝ 17-ը տեղափոխվել են պայմանական, 9-ը հեռացվել են:

**Որոշեցին –**աշխատանքները համարել բավարար:

4. **Լսեցին –** 2021-2022 ուստարվա առկա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները

**Արտահայտվեցին –** ուսումնական գծով դեկանի տեղակալ Լիանա Այվազյանը ներկայացրեց, որ բոլոր քննական գրաֆիկները պատրաստ են:

**Որոշեցին** –աշխատանքները համարել բավարար։

5. **Լսեցին –** Հեռակա ուսուցման 2021-2022 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստում
**Արտահայտվեցին –** ուսումնական գծով դեկանի տեղակալ Լիանա Այվազյանը ներկայացրեց, որ հեռակա ուսուցման դասացուցակները կազմվում են ժամանակացույցին համապատասխան։
**Որոշեցին** –աշխատանքները համարել բավարար։

**ընթացիկ հարցեր**
**6.ԼՍԵՑԻՆ** – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, արվեստագիտության թեկնածու Արմինե Հակոբյանին դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը:
**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ա.Հակոբյանը նշեց, որ Արմինե Հակոբյանը ունի 4 տարվա բուհում դասավանդելու մանկավարժական ստաժ, հեղինակություն է վայելում ուսանողների և դասախոսների շրջանում, դրսևորում է բարձր մասնագիտական կարողություններ: Ունի համապատասխան քանակի հոդվածներ, ուսումնամեթոդական ձեռնարկ:
**ՈՐՈՇԵՑԻՆ** – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, արվեստագիտության թեկնածու Արմինե Հակոբյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:
Նիստին ներկա էին խորհրդի 25 անդամներից 18-ը:
Բաց քվեարկության արդյունքում
Կողմ-18
Դեմ- 0
Ձեռնպահ - 0

**7.ԼՍԵՑԻՆ** - Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 2021թ. տարեկան հաշվետվության հարցը:
**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արա Հակոբյանը, ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը, գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ Ա.Բաղդասարյանը, կերպարվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կ.Աղամյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ա.Հարությունյանը, արվեստի պատմության տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ դոցենտ Ս.Մելիքյանը նշեցին, որ 2021թ. ֆակուլտետի յուրաքանչյուր ամբիոն կատարել է հաշվետվություն, որոնք և հիմք են հանդիսացել ֆակուլտետի հաշվետվության համար։
**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել 2021 թվականի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի հաշվետվությունը։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 8**
2022թ. հունվարի 27-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը
ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1. 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանի հաստատում
2. 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների հաշվետվություն
3. 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի պրակտիկաների հաշվետվություն
4.2021-2022 ուստարվա մանկավարաժական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստում
5. Ընթացիկ հարցեր
Նիստին ներկա էին խորհրդի 25 անդամից 19-ը

**1. Լսեցին -** 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանի հաստատման հարցը
**Արտահայտվեցին** – ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը, ներկայացրեց կիսամյակի աշխատանքային պլանը

**Որոշեցին** – հաստատել 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանը։

**2. Լսեցին** – 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների հաշվետվությունը
**Արտահայտվեցին** – Ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքները

| | Կուրս | ուս. թիվը | Քննությունների մասնակցել են | դրական նիշով հանձնել են | անբավարար են ստացել | | | ազատված |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 1առարկ. | 2առարկ. | 3 և ավելի | |
| ***Բակալավր*** | *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* |
| *Կերպարվեստ* | I | 45 | 40 | 25 | *10* | 4 | 1 | 5 ազատ. |
| | II | 30 | 27 | 20 | *2* | 2 | 3 | 3 ազատ. |
| | III | 33 | 32 | 28 | *3* | - | 1 | 1 ազատ. |
| | IV | 27 | 27 | 20 | *3* | 1 | 3 | - |
| *Արվ.տես.պատմ.և կառավ.* | I | 6 | 5 | 4 | - | - | 1 | 1 ազատ. |
| | II | 5 | 5 | 3 | *2* | - | - | - |
| | III | 4 | 4 | 3 | - | - | 1 | - |
| | IV | 5 | 5 | 3 | *1* | 1 | - | - |
| *Մշակութաբանություն* | I | 12 | 11 | 8 | *1* | 1 | 1 | 1 ազատ. |
| | II | 11 | 11 | 6 | *2* | 2 | 1 | - |
| | III | 5 | 5 | 5 | - | - | - | - |
| | IV | 2 | 2 | 2 | - | - | - | - |
| *Հագուստի մոդելավորում* | I | 27 | 25 | 19 | *6* | - | - | 2 ազատ. |
| | II | 26 | 25 | 17 | *5* | 1 | 2 | 1 ազատ. |
| | III | 28 | 28 | 19 | *3* | 1 | 5 | - |
| | IV | 11 | 11 | 3 | *1* | 1 | 8 | - |
| *Դեկոր.կիրառ. արվեստ* | I | 17 | 16 | 8 | *4* | 1 | 3 | 1 ազատ. |
| | II | 14 | 13 | 10 | *1* | - | 2 | 1 ազատ. |
| | III | 18 | 18 | 15 | *2* | - | 1 | - |
| | IV | 15 | 13 | 5 | *4* | 2 | 2 | 2 ազատ. |
| *Երաժշտական կրթութ.* | I | 21 | 17 | 10 | *3* | 1 | 3 | 4 ազատ. |
| | II | 18 | 17 | 11 | *4* | - | 2 | 1 ազատ. |
| | III | 25 | 23 | 11 | *6* | 1 | 4 | 2 ազատ. |
| | IV | 14 | 12 | 7 | *3* | - | 2 | 2 ազատ. |
| ***ուսանող. թիվ*** | | *419* | *392* | 262 | 66 | 19 | 45 | 27 |
| ***Մագիստրատուրա*** | *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* |
| *Կերպարվեստ* | I | 6 | 6 | 6 | - | - | - | - |
| | II | 15 | 15 | 8 | 4 | 2 | 1 | - |
| *Արվ.տես.պատմ.և կառավ.* | I | 2 | 2 | 1 | 1 | - | - | - |
| | II | 9 | 8 | 8 | - | - | 1 | - |
| *Մշակութաբանություն* | I | 1 | 1 | 1 | - | - | - | - |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | II | 4 | 4 | 3 | - | - | 1 | - |
| *Դեկոր.կիրառ. արվեստ* | I | 3 | 2 | - | 2 | - | - | 1 ազատ. |
| | II | 5 | 5 | 5 | - | - | - | - |
| *Երաժշտական կրթութ.* | I | 11 | 10 | 7 | 1 | 1 | 1 | 1 ազատ. |
| | II | 6 | 5 | 2 | 1 | 1 | 1 | 1 ազատ. |
| ***ուսանող. թիվ*** | | 62 | 58 | 41 | 9 | 4 | 5 | 3 |

**Որոշեցին** – Արդյունքները համարել բավարար:

**3. Լսեցին** – 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի մանկավարժական և ուսումնական պրակտիկաների հաշվետվությունների հարցը:

**Արտահայտվեցին** – Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ՝ Մ.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը ներկայացրեցին առկա և հեռակա ուսուցման կուրսեցի պրակտիկաների հաշվետվությունը: Ընդհանուր առմամբ պրակտիկաներն ընթացել են լավ:

**Որոշեցին** – Աշխատանքները համարել բավարար:

**4. Լսեցին** – 2021-2022 ուստարվա մանկավարժական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստման հարցը:

**Արտահայտվեցին** – Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ՝ Մ.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը ներկայացրեցին առկա և հեռակա ուսուցման կուրսերի պրակտիկաների բազաները և խմբերը:
Մ.Ավետիսյանը ներկայացրեց, որ 2020-2021 ուստարվա 2-րդ կիսակում երկու ուսանող՝ Բաղդասարյան Մերի Սեդրակի (կերպ.) և Ավետիսյան Թամարա Մարդիկի (հագ.մոդ.) ուսումնական (պլեներային) պրակտիկան անցկացրել են թերի, որի պատճառով անհրաժեշտ է ներկայիս պրակտիկայի ընթացքում կազմակերպել տվյալ ուսանողների ուսումնական պրակտիկան յուրաքանչյուր չորեքշաբթի դասերից հետո կից համապատասխան խմբերին:

**Որոշեցին** – Թույլատրել Մերի Բաղդասարյանին և Թամարա Ավետիսյանին լրացնել 2020-2021թթ 2-րդ կիսամյակի պրակտիկայի թերի մնացած ժամերը:

ընթացիկ հարցեր

**5. Լսեցին –** ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի, 2022 թվականի գործողությունների կատարման պլանը:

**Արտահայտվեցին** – գիտության գծով դեկանի տեղակալ Ա.Բաղդասարյանը ներկայացրեց ֆակուլտետի ռազմավարական ծրագրի 2022 թվականի գործողությունների կատարման պլանը:

**Որոշեցին** –հաստատել 2022 թվականի գործողությունների կատարման պլանը:

**6. Լսեցին**- երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Վյաչեսլավ Եդիգարյանի «Արամ Խաչատրյանի «Մանկական ալբոմ»» մեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը

**Արտահայտվեցին**- երաժշտության մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր Յու.Յուզբաշյանը, պրոֆեսոր Է.Դանիելյանը նշեցին, որ ներկայացված մեթոդական ձեռնարկը արդիական աշխատություն է ու պահանջված է թե դասախոսների, թե ուսանողների համար:

**Որոշեցին-** Երաշխավորել հրատարակության երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, արվ. գիտ. թեկնածու Վյաչեսլավ Եդիգարյանի «Արամ Խաչատրյանի «Մանկական ալբոմ»» մեթոդական ձեռնարկը:

Կողմ-19
Դեմ- 0
Ձեռնպահ – 0

**7. ԼՍԵՑԻՆ** – Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի հայցորդ Արփինե Թորիկյանի ատենախոսության թեման և ատենախոսության ղեկավար հաստատելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ արվ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Մելիքյանը, պրոֆեսոր Ս.Աղաջանյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ թեման՝ «Սարգիս Խաչատրյանի արվեստը» կարևոր է արվեստաբանության նկատառումներով, այն ուսումնասիրում և առբողջացնում է նկարչի կյանքն ու ստեղծագործությունը, կրում է մենագրական բնույթ: Ատենախոսի ղեկավար առաջարկվեց արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արա Հակոբյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին հաստատելու Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի հայցորդ Արփինե Թորիկյանի «Սարգիս Խաչատրյանի արվեստը» խորագրով ատենախոսության թեման, ԺԷ.00.03-«Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ, ատենախոսության ղեկավար հաստատել արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արա Հակոբյանին:

Նիստին ներկա էին խորհրդի 25 անդամներից 19-ը:

Բաց քվեարկության արդյունքում

Կողմ- 19

Դեմ - 0

Ձեռնպահ – 0

**8. ԼՍԵՑԻՆ** – 3-րդ կուրսերի պրակտիկաների կազմակերպման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց առկա ուսուցման 3-րդ կուրսերի պրակտիկան փետրվարի 9-ից մեկնարկելու հիմքերը: Իր ելույթում Լ.Այվազյանը նշեց, որ ֆակուլտետում կազմակերպվող դասապրոցեսը առերես է և հաշվի առնելով covid-19 թվերի աճը, կուտակումներից խուսափելու համար, 3- րդ կուրսի պրակտիկան սկսել փետրվարի 9-ից:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – հաստատել առկա ուսուցման 3-րդ կուրսի պրակտիկայի սկիզբը փետրվարի 9-ից (6 շաբաթ տևողությամբ):

**9. ԼՍԵՑԻՆ** – համալսարին 100-ամյակի հետ կապված ֆակուլտետի մոտակա միջոցառումների ցանկն ու աշխատանքային ընթացքի հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց առկա ուսուցման 3-րդ կուրսերի պրակտիկան փետրվարի 9-ից մեկնարկելու հիմքերը: Իր ելույթում Լ.Այվազյանը նշեց, որ ֆակուլտետում կազմակերպվող դասապրոցեսը առերես է և հաշվի առնելով covid-19 թվերի աճը, կուտակումներից խուսափելու համար, 3- րդ կուրսի պրակտիկան սկսել փետրվարի 9-ից:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – հաստատել առկա ուսուցման 3-րդ կուրսի պրակտիկայի սկիզբը փետրվարի 9-ից (6 շաբաթ տևողությամբ):

10. **ԼՍԵՑԻՆ** – համալսարին 100-ամյակի հետ կապված ֆակուլտետի առաջիկա միջոցառումների ցանկն ու աշխատանքային ընթացքի հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – ֆակուլտետի դեկան Ա.Հակոբյանը ներկայացրեց առաջիկա միջոցառումները, որոնք տեղի կունենան փետրվար և մարտ ամիսներին:

1.Անվանակոչել քանդակագործ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ, ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ Ղուկաս Չուբարյանի և ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Սուրեն Սաֆարյանի արվեստանոցները:

2.Հ.194 հիմնական դպրոցում կազմակերպել ցուցահանդես և համերգ:

3.Նկարիչների միության սրահում կազմակերպել ֆակուլտետի դասախոսների ցուցահանդես:

4.Արամ Խաչատուրյանի տուն-թանգարանում կազմակերպել համերգ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – հաստատել վերընշված միջոցառումները:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 9**

2022թ. փետրվարի 28-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի պարտքերի մարման արդյունքների հաշվետվություն
2. մագիստրատուրայի մանկավարժահետազոտական և մասնագիտական պրակտիկաների նախապատրաստում
3. ամբիոնների վարիչների հաշվետվությունը մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքի մասին
4. ֆակուլտետի գարնանային միջոցառումների ցանկը
5. ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 25 անդամից 19-ը

**1. Լսեցին -** 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի պարտքերի մարման արդյունքների հաշվետվության հարցը

**Արտահայտվեցին** – Ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի մարման արդյունքները

բակալավրիատ՝ քննության մասնակցել է 391 ուսանող, 355 ուսանող ստացել է դրական, 2 ուսանող ներկայացվել են հեռացման, 34-ը պայմանական տեղափոխված են։

մագիստրատուրա՝ քննության մասնակցել է 60 ուսանող, 59 ուսանող ստացել է դրական, 1 ուսանող ներկայացվել է հեռացման։

**Որոշեցին** – Արդյունքները համարել բավարար։

**2. Լսեցին**- մագիստրատուրայի մանկավարժահետազոտական և մասնագիտական պրակտիկաների նախապատրաստման հարցը

**Արտահայտվեցին** – Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ՝ Մ.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը ներկայացրեցին պրակտիկայի ժամանակացույցը, նշեցին, որ պրակտիկան անց է կացվելու ֆակուլտետում սույն թավականի 30.03-19.04։

**Որոշեցին** – աշխատանքները համարել բավարար։

**3. ԼՍԵՑԻՆ** – ամբիոնների վարիչների հաշվետվությունը մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքի մասին

**Արտահայտվեցին** –երաժշտական մանկավարժության ամբիոնի վարիչ Ս.Էբակյանը իր ելույթում նշեց, որ ամբիոնն ունի 5 մագիտրոս, որոնք աշխատանքները կատարում են պահանջներին համապատասխան, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը նշեց, որ ամբիոնն ունի 12 մագիստրոս և աշխատանքների ընթացքը համապատասխանում է ժամանակացույցին, կերպարվեստի ամբիոնի վարիչի տեղակալ Մ.Մելքոնյանը նշեց, որ ամբիոնն ունի 20 մագիստրոս որոնց աշխատանքները կատարվում են գրաֆիկին համապատասխան։

**Որոշեցին** – աշխատանքները համարել բավարար։

**4. ԼՍԵՑԻՆ** – ֆակուլտետի գարնանային միջոցառումների ցանկի մասին

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – ֆակուլտետի դեկան Ա.Հակոբյանը ներկայացրեց համալսարանի 100 ամյակին նվիրված գարնանը կայանալիք միջոցառումները, նշելով, որ մարտի 21-ին Հայաստանի նկարիչների միությունում կկայանա ֆակուլտետի դասախոսական անձնակազմի աշխատանքների ցուցադրությունը, իսկ ապրիլ ամսվա 2-րդ կեսին Ա.Խաչատրյանի թանգարանում երաժշտության մանկավարժության ամբիոնի կողմից կազմակերպված համերգ։

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Աշխատանքները համարել բավարար։

ընթացիկ հարցեր

**5. ԼՍԵՑԻՆ** – երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Աննա Սիմոնյանի դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ Ս.Էլբակյանը ներկայացրեց, որ երաժշտության մանկավարժության և նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնների համատեղ նիստի արդյունքում կայացվել է որոշում՝ ներկայացնել Աննա Սիմոնյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչման շնորհելու համար: Ս.Էլբակյանը նշեց, որ Ա.Սիմոնյանը բուհում դասավանդում է 2013 թվականից, ատենախոսությունը պաշտպանել է 2019 թվականին, ունի համապատասխան քանակի գիտական հոդվածներ և ուսումնամեթոդական ձեռնարկ: Ա.Սիմոնյանը իրեն ցուցաբերել է որպես բանիմաց դասախոս, վայելում է ուսանողների և կոլեգաների հարգանքը:

Յու.Յուզբաշյանը բնութագրեց Ա.Սիմոնյանի գործունեությունը, շեշտելով գիտահետազոտական գործունեության արդյունավետությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Աննա Աշոտի Սիմոնյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Նիստին ներկա էին խորհրդի 25 անդամներից 19-ը:

Բաց քվեարկության արդյունքում

Կողմ-19

Դեմ- 0

Ձեռնպահ - 0

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 10

2022թ. մարտի 25-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

**օրակարգում**

Կերպարվեստի ամբիոնի երեք հայցորդի թեմաների և ղեկավարի հաստատման հարցը

**1.ԼՍԵՑԻՆ** – Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Շուշան Քոչարյանի <<Սովորողների տեղեկատվական գիտելիքների ձևավորման հիմքերը կերպարվեստի ուսուցման գործընթացում>> խորագրով ատենախոսության թեման և ատենախոսության ղեկավարի փոփոխության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – կերպարվեստի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Կ. Աղամյանը, պրոֆեսոր Ա.Քեշիշյանը, պրոֆեսոր Լ.Ներսիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ թեման արդիական է և ժամանակահունչ, այն անհրաժեշտ է դասավանդման պրոցեսում: Հիմք ընդունելով հայցորդի դիմումը և ամբիոնի հ.8 նիստի քաղվածքը՝ խորհրդի նախագահ Ա.Հակոբյանը ներկայացրեց ատենախոսի նոր ղեկավարին՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին հաստատելու Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Շուշան Քաչարյանի <<Սովորողների տեղեկատվական գիտելիքների ձևավորման հիմքերը կերպարվեստի ուսուցման գործընթացում>> խորագրով ատենախոսության թեման, ԺԳ.00.02 (դասավանդման և դաստիարակության մեթոդիկա, կերպարվեստ մասնագիտությամբ), ատենախոսության ղեկավար հաստատել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին:

Նիստին ներկա էին խորհրդի 25 անդամներից 19-ը:

Բաց քվեարկության արդյունքում

Կողմ- 19

Դեմ - 0

Ձեռնպահ – 0

**2.ԼՍԵՑԻՆ** – Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Լիլիթ Ամիրջանյանի «Մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկան գեղարվեստական կրթօջախներում» խորագրով ատենախոսության թեման և ատենախոսության ղեկավարի փոփոխության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – կերպարվեստի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Կ. Աղամյանը, պրոֆեսոր Ա.Քեշիշյանը, պրոֆեսոր Լ.Ներսիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ թեման անհրաժեշտ մերօրյա կրթօջախներում, այն անհրաժեշտ է դասավանդման պրոցեսում: Հիմք ընդունելով հայցորդի դիմումը և ամբիոնի հ.8 նիստի քաղվածքը՝ խորհրդի նախագահ Ա.Հակոբյանը ներկայացրեց ատենախոսի նոր ղեկավարին՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին հաստատելու Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Լիլիթ Ամիրջանյանի «Մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկան գեղարվեստական կրթօջախներում» խորագրով ատենախոսության թեման, ԺԳ.00.02 (դասավանդման և դաստիարակության մեթոդիկա, կերպարվեստ մասնագիտությամբ), ատենախոսության ղեկավար հաստատել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին:

Նիստին ներկա էին խորհրդի 25 անդամներից 19-ը:
Բաց քվեարկության արդյունքում
Կողմ- 19
Դեմ - 0
Ձեռնպահ – 0

3. **ԼՍԵՑԻՆ** – Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Նաիրա Խաչատրյանի «Կոմպոզիցիա առարկայի դասավանդման առանձնահատկությունները միջին մասնագիտական հաստատություններում» խորագրով ատենախոսության թեման և ատենախոսության ղեկավար հաստատելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – կերպարվեստի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Կ. Աղամյանը, դոցենտ Մ.Մելքոնյանը, պրոֆեսոր Լ.Ներսիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ թեման արդիական է և անհրաժեշտ դասավանդման պրոցեսում: Խորհրդի նախագահ Ա.Հակոբյանը ներկայացրեց ատենախոսի ղեկավարին՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին հաստատելու Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Նաիրա Խաչատրյանի «Կոմպոզիցիա առարկայի դասավանդման առանձնահատկությունները միջին մասնագիտական հաստատություններում» խորագրով ատենախոսության թեման, ԺԳ.00.02 (դասավանդման և դաստիարակության մեթոդիկա, կերպարվեստ մասնագիտությամբ), ատենախոսության ղեկավար հաստատել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանին:

Նիստին ներկա էին խորհրդի 25 անդամներից 19-ը:
Բաց քվեարկության արդյունքում
Կողմ- 19
Դեմ - 0
Ձեռնպահ – 0

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 11**

2022թ. ապրիլի 8-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Հեռակա ուսուցման կերպարվեստ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Հայկ Հարությունյանի պրակտիկա անցնելու մասին (կրկնակի)

**Լսեցին** - հեռակա ուսուցման կերպարվեստ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Հայկ Հարությունյանի պրակտիկա անցնելու (կրկնակի) հարցը

**Որոշեցին** – հեռակա կերպարվեստ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Հայկ Հարությունյանին թույլատրել 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի մանկավարժական պրակտիկան անցկացնել ապրիլի 13-ից մինչև մայիսի 11-ը (4շաբաթ) Ս.Շահումյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցում:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 12**

2022թ. ապրիլի 14-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Հեռակա ուսուցման կերպարվեստ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Հակոբ Սիմոնյանի պրակտիկա անցնելու մասին (կրկնակի)

**Լսեցին -** հեռակա ուսուցման կերպարվեստ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Հակոբ Սիմոնյանի պրակտիկա անցնելու (կրկնակի) հարցը

**Որոշեցին** – հեռակա ուսուցման կերպարվեստ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Հակոբ Սիմոնյանին թույլատրել 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի մանկավարժական պրակտիկան անցկացնել ապրիլի 18-ից մինչև մայիսի 13-ը (4շաբաթ) Ս.Շահումյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցում։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 13**

2022թ. ապրիլի 22-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Հեռակա ուսուցման երաժշտական կրթություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Սերինե Ամիրխանյանի պրակտիկա անցնելու մասին (կրկնակի)

**Լսեցին -** հեռակա ուսուցման երաժշտական կրթություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Սերինե Ամիրխանյանի պրակտիկա անցնելու (կրկնակի) հարցը

**Որոշեցին** – հեռակա ուսուցման երաժշտական կրթություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Սերինե Ամիրխանյանին թույլատրել 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի մանկավարժական պրակտիկան անցկացնել ապրիլի 26-ից մինչև մայիսի 23-ը (4շաբաթ) ՀՊՄՀ թիվ 57 հիմնական դպրոցում։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 14**

2022թ. մայիսի 13-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2021-2022 ուստարվա ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքների ամփոփում
2. 2021-2022 ուստարվա առկա և հեռակա ուսուցման մանկավարժական և ուսումնական պրակտիկաների կատարման արդյունքների ամփոփում
3. ընթացիկ հարցեր

1. **Լսեցին** – 2021-2022 ուստարվա ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը

**Արտահայտվեցին** – Ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ամփոփեց 2020-2021 ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքները.

4-րդ կուրս՝ քննություններին մասնակցել է 69 ուսանող, դրական ստացել են 69 ուսանող,

2-րդ մագիստրատուրա՝ քննություններին մասնակցել է 37 ուսանող, դրական ստացել է 37 ուսանող

5-րդ կուրս հեռակա՝ քննություններին մասնակցել է 53 ուսանող, դրական ստացել է 51 ուսանող, 2 ուսանող դուրս է մնացել համակարգից։

**Որոշեցին** – Արդյունքները համարել բավարար։

2.**Լսեցին** – 2021-2022 ուստարվա առկա և հեռակա ուսուցման մանկավարժական և ուսումնական պրակտիկաների կատարման արդյունքների ամփոփման հարցը։

**Արտահայտվեցին** – Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ՝ Մ.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը։ Իրենց ելույթներում նշեցին, որ պրակտիկաները ընթացել են ժամանակացույցներին համաձայն համապատասխան ժամկետներում։

**Որոշեցին** – Կատարված աշխատանքները համարել բավարար։

**ընթացիկ հարցեր՝**

**ԼՍԵՑԻՆ** – Կերպարվեստի ամբիոնի կողմից ներկայացված ամառային պլեներային պրակտիկայի հարցը

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – կերպարվեստի ամբիոնի պրոֆեսորներ Կ.Աղամյանը և Լ.Ներսիսյանը իրենց ելույթներում հիմնավորեցին, որ ամառային պլեներային պրակտիկան անհրաժեշտ է նկարիչ-մանկավարժի ձևավորման համար՝ այն նպաստում է բնաճանաչության և բնանկարի զարգացմանը, քանի որ այն առկա է կերպարվեստի պարապմունքների բոլոր չորս տեսակներում։ Կերպարվեստի ամբիոնի նիստի 06.05.2022 նիստ հ.8 արձանագրության համաձայն՝ պրակտիկան առաջարկվում է անցկացնել համալսարանի Աղավնաձորի ուսումնական բազայում, 2 շաբաթ տևողությամբ, կերպարվեստ մասնագիտության 1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերի մոտ։

**ՈՐՈՇԵՑԻՆ** – դիմել Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտոր, պրոֆեսոր Ս.Գևորգյանին վերականգնելու ամառային պլեներային պրակտիկան համալսարանի Աղավնաձորի ուսումնական բազայում, 2 շաբաթ տևողությամբ, կերպարվեստ մասնագիտության 1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերի մոտ՝ մինչև 15 ուսանող թվաքանակով՝ գործնական խմբերով։

Կողմ-19

Դեմ- 0

Ձեռնպահ – 0

3. **ԼՍԵՑԻՆ** – երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Արուսյան Կոստանյանի «Հոգու հույզեր» հայ կոմպոզիտորների երգերի դաշնամուրային փոխադրումներ մեթոդական ցուցումների տպագրության երաշխավորելու հարցը

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ, մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ Սարգիս Էլբակյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Յուրի Յուզբաշյանը, նշեցին, որ աշխատանքը պահանջված է և արդիական։ Ա.Բաղդասարյանը նշեց, որ Արուսյակ Կոստանյանը ներկայացրել է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը՝ երկու դրական կարծիք, ամբիոնի նիստի քաղվածք (31.01.2022 նիստ հ.6 արձանագրությունից)

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Երաշխավորել հրատարակության երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Արուսյակ Կոստանյանի Հոգու հույզեր» հայ կոմպոզիտորների երգերի դաշնամուրային փոխադրումներ մեթոդական ցուցումները։

Կողմ-19

Դեմ- 0

Ձեռնպահ – 0

**4. ԼՍԵՑԻՆ** – կերպարվեստի ամբիոնի դոցենտ, մանկ.գիտ.թեկնածու Ժաննա Խաչատրյանի «Նախադպրոցականի անձի զարգացման գեղարվեստամանկավարժական պայմանները» խորագրով մեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Լ.Ներսիսյանը նշեց, որ նման հետազոտությունը մեթոդական օգնություն կհանդիսանա մանկապարտեզում աշխատող դաստիարակների, մանկավարժների համար։ Ժաննա Խաչատրյանը ներկայացրել է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը՝ երկու դրական կարծիք, ամբիոնի նիստի քաղվածք (06.05.2022 նիստ հ.8արձանագրությունից)

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Երաշխավորել հրատարակության կերպարվեստի ամբիոնի դոցենտ, մանկ.գիտ.թեկնածու Ժաննա Խաչատրյանի «Նախադպրոցականի անձի զարգացման գեղարվեստամանկավարժական պայմանները» խորագրով մեթոդական ձեռնարկը:

Կողմ-19

Դեմ- 0

Ձեռնպահ - 0

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 15

2022թ. հունիսի 10-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Ավարտական աշխատանքների հանձնաժողովի հաշվետվության մասին

**Լսեցին** – 2021-2022 ուստարվա ավարտական աշխատանքների հանձնաժողովի հաշվետվության հարցը:

**Արտահայտվեցին** – ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը ներկայացրեց բոլոր ամբիոնների ավարտական աշխատանքների մասին հանձնաժողովների հաշվետվությունները: Նա նշեց, որ ընդհանուր առմամբ գործընթացն իրականացվել է պատշաճ մակարդակով:

**Որոշեցին** – Ավարտական աշխատանքի հանձնաժողովների հաշվետվությունները հաստատել:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 16

2022թ. հունիսի 30-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում
2. ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 27 անդամից 19-ը

1. **Լսեցին** – 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը:

**Արտահայտվեցին** – ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ. Այվազյանը ներկայացրեց 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները.

| | **ընդհանուր** | **քննությունները հանձնած** | **անբավարար** |
|---|---|---|---|
| **բակալավրիատ** 1-3-րդ կուրսեր (առկա) | 314 ուս. | 216 | 98 |
| **մագիստրատուրա 1-ին կուրս** | 22 ուս. | 19 | 3 |

Հեռակա ուսուցման համակարգի քննաշրջանը ընթացքում է:

**Որոշեցին** – քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

**ընթացիկ հարցեր՝**

**2.ԼՍԵՑԻՆ** – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի /2022-2025թթ./ գործողությունների կատարման պլանի վերաբերյալ հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի գիտության գծով դեկանի տեղակալ Ա.Բաղդասարյանը համառոտ ներկայացրեց ՀՊՄՀ 2022-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագրի նպատակներից, խնդիրներից բխող Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 2022-2025թթ. վերամշակված զարգացման ռազմավարական ծրագիրը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 2022-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը:

**3.ԼՍԵՑԻՆ** – կերպարվեստի ամբիոնի դոցենտ, մանկ.գիտ.թեկնածու Ժաննա Խաչատրյանի «Նախադպրոցականի անձի զարգացման գեղարվեստամանկավարժական պայմանները» խորագրով մեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Լ.Ներսիսյանը նշեց, որ նման հետազոտությունը մեթոդական օգնություն կհանդիսանա մանկապարտեզում աշխատող դաստիարակների, մանկավարժների համար: Ժաննա Խաչատրյանը ներկայացրել է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը՝ երկու դրական կարծիք, ամբիոնի նիստի քաղվածք (06.05.2022 նիստ հ.8 արձանագրությունից)

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին երաշխավորելու հրատարակության կերպարվեստի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Ժաննա Լևուշի Խաչատրյանի «Նախադպրոցականի անձի զարգացման գեղարվեստամանկավարժական պայմանները» խորագրով մեթոդական ձեռնարկը:

Կողմ-19

Դեմ- 0

Ձեռնպահ - 0

**4.ԼՍԵՑԻՆ** – երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ Մարգարիտա Բաղդասարյանի «Ռուս երաժշտության պատմություն»՝ լրացված և վերամշակված ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ, մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ Սարգիս Էլբակյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Յուրի Յուզբաշյանը, նշեցին, որ լրացվել է խորհրդային շրջանի երաժշտության պատմությունը (1917-1990-ականներ), որ այս վերամշակված ուսումնական ձեռնարկը հնարավորություն կտա ուսանողներին ուսումնասիրելու ռուս երաժշտության պատմությունը: Ա.Բաղդասարյանը նշեց, որ Մարգարիտա Բաղդասարյանը ներկայացրել է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը՝ երկու դրական կարծիք, ամբիոնի նիստի քաղվածք (23.06.2022 նիստ հ.11 արձանագրությունից)

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Երաշխավորել հրատարակության երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Մարգարիտա Բաղդասարյանի «Ռուս երաժշտության պատմություն»՝ լրացված և վերամշակված ուսումնական ձեռնարկը:

Կողմ-19

Դեմ- 0

Ձեռնպահ – 0

5. **ԼՍԵՑԻՆ** – 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում կայացած Ցյուրիխի արվեստների համալսարանում և ՀՊՄՀ գեղարվեստական կրթության ֆակուլտետում կայացած պրակտիկայի հաշվետվությունը

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – պրակտիկայի ղեկավարներ՝ Հայկուհի Մուկայանը և Նաիրա Մխիթարյանը ներկայացրեցին հաշվետվություն, որում առանձնակի շեշտեցին դասավանդման մեթոդների տարբերությունն ու դրանց առանձնահատկությունները:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Պրակտիկայի գործընթացը համարել բավարար:

6. **ԼՍԵՑԻՆ** –2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի մանկավարժական և ուսումնական պրակտիկաների հաշվետվությունների հարցը:

**Արտահայտվեցին** – Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ՝ Մ.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը ներկայացրեցին առկա և հեռակա ուսուցման կուրսերի պրակտիկաների հաշվետվությունը: Ընդհանուր առմամբ պրակտիկաներն ընթացել են լավ:

**Որոշեցին** – Աշխատանքները համարել բավարար:

7. **ԼՍԵՑԻՆ** – կերպարվեստ մասնագիտության շրջանավարտ Արման Մակարյանի «19-րդ դարի արևմտահայ մանկական հանդեսների նկարազարդումների դաստիարակիչ դերը («Աւետաբեր տղայոց համար», «Թատրոն. բարեկամ մանկանց»)» խորագրով ավարտական աշխատանքը հրատարակության երաշխավորելու հարցը

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը ներկայացրեց Արման Մակարյանի կատարած աշխատանքը և նշեց, որ սա լավ նախաձեռնություն է ուսանողական ուսումնասիրությունը տպագրելու համար

**ՈՐՈՇԵՑԻՆ** – երաշխավորել հրատարակության կերպարվեստ մասնագիտության շրջանավարտ Արման Մակարյանի «19-րդ դարի արևմտահայ մանկական հանդեսների նկարազարդումների դաստիարակիչ դերը («Աւետաբեր տղայոց համար», «Թատրոն. բարեկամ մանկանց»)» խորագրով ձեռնարկը։

Կողմ-19

Դեմ- 0

Ձեռնպահ - 0

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ